Ը. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 14 ՅՈՒՆՈՒԱՐ 1906 — ԹԻՒ 782

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր. վեցամսեայ 7 «

Արտասահմանի համար տարեկան 15 ֆր. վեցամսեայ 8 «

Ամերիկայի համար տարեկան 3 տլ. վեցամսեայ 1.50 «

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. Երեքին և աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կ'ըլլայ:

—o—

Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ է

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ "Шаржумъ", Варна

Redaction du journal „Charjoum" Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեռքէ 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքէ 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

Café Promenade
Vienne

Այս շքեղ սրճարանը կը գտնուի Վիեննա Ֆրանց Ժոզէֆ քարափին վրայ. կը ստանայ զանազան հայերէն թերթեր. Առհասարակ բոլոր հայ կամ արեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն. Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս ուր պիտի գտնեն իրենց յարմար դիւրութիւնները և անհրաժեշտ տեղեկութիւնները.

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԸ

Ստորեւ նոյնութեամբ կարտատպենք «ԱՐՇԱԼՈՅՍ»ի մէկ խմբագրականը որ բաւական խիստ ամբաստանագիր մըն է ցարին կառավարութեան հայ-թաթարական ընդհարումներու առեն կատարած ստոր դերին.

«Ժամանակն է այլեւս կարծում ենք, հարցնելու թէ ինչ է մտածում հայ ժողովուրդը, հասարակութիւնը ոչ թէ այս կամ այն անձնաւորութեան մասին, այլ կառավարութեան, կամ երկրիս բարձր իշխանութեան „գործունէութեան մասին՝ թուրքական ընդհարումների վերաբերմամբ»։

«Մեր կարծիքով հայ ժողովուրդը կարող է պատասխանել հետեւեալը. — „Այն ճնշող, հալածող քաղաքականութիւնից յետոյ, որ առանձին եռանդով գործադրում էր իշխ. Գոլիցինը հայերի վերաբերմամբ, կոմս Վորոնցովի այն դիմումը դէպի կովկասեան ազգաբնակութիւնը որ նա արել էր Պետերբուրգից Կովկաս գալուց առաջ՝ ընդունուեց նաեւ հայ ժողովրդի կողմից բաւարարութեամբ եւ յոյսերով. Երբ Փոխարքան Կովկաս մտաւ՝ հայ ժողովուրդը անհամբեր սպասում էր իր նոր աւետած քաղաքականութեան ապացոյցները տեսնելու ի միջի այլոց՝ հայ եկեղեցական կալուածների և դպրոցների վերաբերմամբ. և ահա յայտնուեց շուտով, որ հայերը յետ են ստանում թէ դպրոցները եւ թէ կալուածները; Ասում էին որ Փոխարքան շատ ուժեղ կերպով էր միջամտել, որպէսզի բարձր կառավարութեան շրջաններում խնդիրը այդ տեսակ լուծում ստանայ, որ այդ հարցում նա մեծ դեր է կատարած: Դրա համար ամեն մի հայ կարող է միայն շնորհակալ լինել կոմսին այդ միջամտութեան համար.

Սակայն զուգընթացաբար և միաժամանակ այդ հարցի հետ գոյութիւն ունէր եւ մի ուրիշ երեւոյթ որ իր սկիզբն առնելով նախկին Գոլիցինեան ռեժիմից՝ քաշքշւում է մինչեւ այսօր, ոչ մի ապացոյց չտալով, որ այդ երեւոյթը պիտի այսպէս թէ այնպէս վերջ ունենայ.

Ընթերցողը գուշակում է, որ մենք խօսում ենք հայ թուրքական ընդհարումների մասին.

Անցած փետրուարից, Բագուայ անսպասելի կոտորածից սկսած մինչեւ ներկայ օրերը, երբ ամեն բան կարելի է սպասել, հայկական կոտորածների տասն ամսուայ ընթացքում էլ ինչ միջոցների ասես որ չէր դիմում հայ ժողովուրդը՝ այդ արիւնահոսութեանը վերջ դնելու համար. Սկզբում նա մխիթարւում էր այն յոյսով, որ անցածը եղած է, այլեւս այդ տեսակ բան չի պատահելու կառավարութիւնը թոյլ չի տայ» եւ ահա ինչո՞ւ՝ հէնց որ չարագուշակ նշոյլներ էին երեւան գալիս պատրաստուող կոտորածի մասին, նա ինքնապաշտպանութեան տարրական միջոցներից դուրս սկսում էր դիմել տեղական կառավարութեան. Սակայն դա չէր օգնում. մի բան, սակայն, ակնյայտնի կերպով սկսեց պարզուել ժողովրդի համար, որ նրա դէմ էր կանգնած ոչ միայն մոլորեցրած թուրք խուժանը եւ նրան կազմակերպողները, այլ եւ ոստիկանութիւնն ու տեղական իշխանութիւնները. Ահա թէ ինչու դիմումները ոչ մի նպատակի չէին հասնում, ահա թէ ինչո՞ւ նոյնիսկ ինքնապաշտպանութեան միջոցները անբաւարար էին...

Դրութիւնը վտանգաւոր էր և յուսահատական, որովհետեւ այդ ինքնապաշտպանութեանը տեղական վարչութիւնները աշխատում էին այլ նշանակութիւն տալ, իբրեւ «ըմբոստ ոյժերի» սովորական արտայայտութեան. Հայոց «Կոմիտէները», «հայոց ապստամբութիւնը» «հայոց թագաւորութիւնը» և նման խօսքերը կրկին սկսեցին այդ իշխանաւորների շրջաններում բերանից բերան անցնել... Ի հարկէ իրանց յանցաւոր դերը արդարացնելու համար.

Այդպէս էր իրերի դրութիւնը, երբ հայ ժողովրդի արիւնը անընդհատ հոսում էր մերթ Նախիջեւանի և Երեւանի, մերթ Շուշուայ և Բագուի վէրքերից...

Եւ հասարակութիւնը սկսեց արդէն դիմումներ անել երկրիս բարձր իշխանութեան:

Ինչո՞ւ էր դիմում.

«Ով է իմանում, ասում էր նա, գուցէ երկրիս բարձր իշխանութիւնը սխալ տեղեկութիւններ ունի այդ կոտորածների մասին, գուցէ նրան մոլորեցնում են այդ կոտորածների սկզբնապատճառների վերաբերմամբ»..

Եւ ո՞վ կարող է մեղադրել հասարակութեանը, երբ ամեն անգամ նա իր պարտքն էր համարում դիմումներ անել, խօսել, բացատրել:

Բայց ահա դարձեալ.. Նոր կոտորած, նոր թալան, կրակ ու մահ... Եւ նորից պատասխան՝ „ոստիկանութիւնն անզօր է», «զօրքի թիւը բաւարար չէ„ «թուրքը հանգիստ է», «հայը ըմբոստ»....:

Հեռագիրներ ու նամակներ ժամէ ժամ, րոպէ առ րոպէ տեղում էին Թիֆլիզ. մէկը միւսից սարսափելի իրանց նկարագրութիւններով. մէկը միւսից զարհուրելի տեղական իշխանութիւնների բռնած դիրքի մասին տուած տեղեկութիւններով—աղերսում, աղաչում էին՝ «դիմել» բարձր կառավարութեան խնդրել որ օգնութիւն անեն...

Մենք՝ հայերս մտածում էինք՝ չէ՞ որ երկրիս բարձր իշխանութեանը ճշգրիտ տեղեկութիւններ տուինք չէ՞ որ բացատրեցինք եղելութիւնը, պատճառները...

Եւ ըստ երեւոյթին, կարծես համոզուեցին.

Իսկ ի՞նչ է կատարւում այժմ Մի՞թէ կարելի է ենթադրել այսպիսի բան, որ երկրիս բարձր իշխանութիւնը միանգամայն անզօր է իր զօրքերով տեղն ու տեղը վերջ դնել կովկասեան թուրքերի այդ նոր շարժմանը. Մենք աւելի բարձր կարծիքի ենք նրա ոյժերի մասին.

«Այստեղ մի ուրիշ բան կայ ...

— Ի՞նչ կայ...

«Այն, որ կառավարութիւնն ու երկրիս բարձր իշխանութիւնը դեռ մնում է այն կարծիքին թէ հայը հաւատարիմ չէ, որ հայ ժողովուրդը վտանգելի տարր չէ պետութեան մէջ, որ նա սեպարատիստ է, վտանգաւոր. Անհրաժեշտ է այդ համոզմունքը արմատախիլ անել նրանց մէջ, հարկաւոր է դարձեալ դիմել եւ բացատրել»։

Ենթադրութիւնները յամենայն դէպս արժանի էին ուշադրութեան, տրամաբանութիւնը ճիշդ էր, իսկ հայերի սեպարատիստական ձգտումների մասին կարծիքը միանգամայն սխալ. Միւս կողմից իրերի դրութեան հեռանկարը լաւ լուծում չէր խոստանում.

Հոկտեմբերի 17-ից յետոյ Բագւում կրկին հայկական տներ սկսեցին այրուել, Թիֆլիզի հայ հասարակութեան ներկայացուցիչները դարձեալ պարտք համարեցին փարատել երկրիս բարձր իշխանութեան առաջ հայերի վերաբերմամբ որ և է կասկած.

Նորից դիմումներ, բացատրութիւններ...

Ճիշտ է դրանից յետոյ ահա մօտ 25 օր է՝ նոր կոտորած, մեծ ծաւալով թալան մեր երկրում, որքան յայտնի է, չէ եղած.

Սակայն հարցն այն է, թէ արդեօք ո՞րքան այդ երեւոյթը բնորոշ է, կամ ո՞րքան պատահական է դա.

Մեր խորին համոզմունքով փետրուարին Բագւում տեղի ունեցած թուրքերի յանդուգն յարձակումների անմիջական պատճառը այն համոզմունքն էր, որ աւերելով ու կոտորելով հայերին, նրանք պատիժ չեն կրելու. Թէ ինչ նպատակներ են ունեցել թուրքերը այդ ոճրագործութիւնը կատարելով, դա այստեղ նշանակութիւն չունի. Պարզ է միայն մի բան, որ երբ անցած փետրուարի առաջին կոտորածների ժամանակ իշխ. Նակաշիձէի կառավարութիւնը արմատացրեց այդ համոզմունքը թուրքերի մէջ բոլոր թուրք-հայկական գաւառներում նրանց բռնած դիրքը հայերի վերաբերմամբ փոխուեց. Անպատասխանատուութեան, անպատիժ մնալու համոզմունքը արտայայտուեց նրանց բոլոր «գործերի մէջ» թէ՛ Շուշի, թէ՛ Բագու և Բալախանի, և մանաւանդ Նախիջեւան, ուր տեղական իշխանութիւնը միանգամայն մրցակից էր նրանց ոճրագործութիւններուն. Եւ ամէնքին յայտնի է, որ ո՛չ մի գաւառապետ ո՛չ մի պրիստաւ եւ ոստիկան, ո՛չ մի խան, ո՛չ մի բէկ եւ ոչ մի հասարակ թուրք չպատժուեց եւ պատասխանատուութեան չենթարկուեց իր արած յանցաւոր գործերի համար.

Խնդիրն այստեղ միայն բարոյական բաւարարութեան մասին չէ (դա մեծ շռայլութիւն կը համարուէր հայերի համար). այլ այդ անպատասխանատուութեան հետեւանքների մասին է. Եւ մենք տեսնում ենք որ այդ հետեւանքները ներկայի և ապագայի համար ո՛չ մի մխիթարական հեռանկար չեն տալիս. որովհետեւ ի՞նչ կարելի է սպասել այն դրութիւնից, երբ յանցաւորը չի պատժւում, դատի

չի ենթարկուում կառավարութեան կողմից. կառավարութեան, որ իր պարտականութիւնները չի կատարում։ Դա կարող է ժամանակաւորապէս խաղաղ դրութիւն առաջ բերել. սակայն, այնուամենայնիւ, կարող են նոր ընդհարումներ լինել՝ առանց որ եւ է մէկին զարմացնելու։

Ահա թէ ինչո՛ւմն է հայերի բողոքը. նա անվստահ է, նա վտանգուած է, որովհետեւ ո՛չ մի բան չի փոխուել այն հանգամանքների մէջ, որոնք առաջ բերին եւ նպաստեցին կոտորածները։

Եթէ այդպէս է, ի՞նչ կարող է ասել Հայը երկրիս բարձր իշխանութեան գործունէութեան մասին այդ խնդրում։ Հայը այս խնդրում, չի կարող այնպիսի պատասխան տալ, որից երեւար թէ նա ինքը գոհ է կառավարութեան գործունէութիւնից։

Երբ հայը կոտորւում էր, մենք՝ աւերուող վայրերից ստացած թարմ հեռագիրները ձեռքներիս՝ դիմում էինք Փոխարքային, Սուլթանին Կրիմ-Գիրէյին, զեն. Շիրինկինին։ Հեռագրական կարգադրութիւնները անւում էին, զեկուցումները գրւում, եւ նոյն իսկ շատ անգամ կառավարութեան գանգատն էր լսւում, թէ «իսկական մարդիկ պակասում են». սակայն հարցը դրանով չի փակւում։ Այդ ի՞նչպէս է պատահում, որ երբ գանգատւում են թէ «իսկական մարդկանց պակասութիւն կայ», միեւնոյն ժամանակ պրինց Նապոլէոնի և կամ դաւառապետ Արնօլդի պէս կտրուկ և շիտակ գործիչները, որոնք, այսպէս ասած՝ բռնում էին եզին ուղղակի պոչերից, հեռանում են պաշտօնից եւ նոյնիսկ հեռացնում... Հարկաւոր չէ բծախնդիր լինել այդ հարցը դնելու համար և սակայն ամեն մէկը մեզանից ակամայ դնում է եւ շարունակ կը դնի այդ հարցը, մինչեւ որ նրա բաւարար բացատրութիւնը չտրուի։

Բայց ո՛րքան այդ տեսակ հարցեր անպատասխան են մնացել. Ո՛րքան խաներ ու բէկեր ուղղակի հայերի երեսին են ծիծաղում, ո՛րքան ոստիկանութեան պաշտօնեաներ հասկացել են իրանց դերերը. ո՛րքան գաւառապետներ և նահանգապետներ մատի արանքով են նայում, երբ հայը կոտորւում է...

Եւ մի՞թէ այս տխուր իրողութիւնը աւելի ծանրակշիռ չէ, քան ինչ որ հայ հասարակութեանը յայտնի է այս ու այն կառավարական հեռագրի կամ բարձր պաշտօնեայի զեկուցագրի մասին։

Երանի՛, թէ մենք սխալուած լինինք, երանի՛ թէ մեզ ուրիշ ապացոյցներ տան։

ՓՈԽԱՐՔԱՆ ՎԵՀԱՓ Ո ՀԱՅՐԻԿԻ ՄՕՏ

(Թիֆլիզ, 19 Նոյեմբերի)

Երէկ ժամը 2ին Փոխարքան այցելութեան եկաւ Վեհափառ Հայրիկին. Ներս մտնելուն պէս Հայրիկը բարի գալուստ մաղթեց Փոխարքային և ներողութիւն խնդրեց, որ հիւանդութեան պատճառով չը կարողացաւ այցելութեան գնալ։ Փոխարքան պատասխանեց. «շատ ուրախ եմ, որ ինձ ընդունում էք ընտանեբար»։

—Բացի այն որ ես ֆիզիքապէս տանջւում եմ—շարունակեց Հայրիկը—հիւանդ եմ և միեւնոյն ժամանակ բարոյապէս շատ ընկճուած։ Իմ սիրտս լցուած է անհուն վշտերով։ Ես գտնւում եմ ծանր ճնշման տակ, լսելով զանազան տեղերի հայ թուրքական կոտորածների և աղէտների մասին, որ ամիսներ շարունակ հասնում են իմ հօտին։ Ես յոյս ունիմ, որ դուք, ինչպէս որ միշտ արդարամիտ էր եղել դէպի հայ ժողովուրդը, կը փրկէք նրան այն կորուստից, որ սպառնում է նրան։

—Ես միշտ լաւ եմ տրամադրուած եղել դէպի հայերը և իմ վերաբերմունքը չեմ փոխել. դրան ապացոյցներ տուել եմ, խնդրեմ հանգիստ լինէք...

Փոխարքան շարունակելով այդ մտքով խօսել, առաջ բերեց Գանձակի օրուայ հարցը և գրպանից հանելով երկու հեռագիր, առաջարկեց թարգման Յուսիկ վարդապետին կարդալ և թարգմանել Նորին Վեհափառութեան։ Հեռագրերից մէկը գեներալ Տակայշվելուց էր, իսկ միւսը՝ Գանձակի ոստիկանապետից. Տակայշվիլին ամսոյս 18ից տեղեկացնում էր, որ 17ի առաւօտեան ժամը 7ին քաղաքի շրջակայքում սպաննուած են երկու թուրք։ Այդ լուրը քաղաք հասնելուն պէս թուրք ամբոխը յուզւում է և սկսում է անկարգութիւններ։ Քաղաքն ամբողջապէս ընկնում է իրարանցման մէջ։ Հայերը սկսում են փակել խանութները և տեղի է ունենում հրացանաձգութիւն։ Զօրքերը կանգնած են որոշ դիրքերում. հրացանաձգութիւնը դադարել է։ Զօրքերի քշութեան և թուլութեան պատճառով, խնդրում եմ նոր զօրք ուղարկել։

Ոստիկանապետը հեռագրում է, որ մասսայական կոտորած չըկայ, սպանութեան դէպքերը մասնակի են։ Այրուած են «թէֆթիյրի աթ» կոչուած խանութները թուրքական մասում... Երկիւղ եմ կրում ապագայի համար, որովհետեւ կարող են գիւղերից քաղաքի վրայ յարձակումներ գործել։

Վեհափառի հրամանով, Յուսիկ վարդապետը կարդաց երկաթուղու գլխաւորի սպացած հեռագրի պատճէնը նոյն դէպքերի մասին։

—Ինձ յայտնի է այդ հեռագիրը, ասաց Փոխարքան։ Գանձակի նահանգապետը այս առաւօտը այստեղ էր։ Մեկնեց Գանձակ. այնտեղից նա ինձ հեռագրով տեղեկութիւններ պիտի տայ։ Այդ տեղեկութիւնները ես անմիջապէս կը հաղորդեմ ձեզ։

Խօսակցութեան ժամանակ Վեհափառը ի միջի այլոց աւելացրեց հետեւեալը. «Հայոց Վաղարշակ թագաւորը իր մօտ երկու պաշտօնեայ ունէր, չար և բարի լուրեր հաղորդելու համար. իսկ ձեզ մօտ իմ ժողովրդի մասին միայն չար լուրեր հաղորդողներ կան, կուզենայի որ բարի խօսողներ էլ լինեն։

—Ես որոշել եմ—պատասխանեց Փոխարքան—առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ ունենալ, որ հայերից պիտի ընտրեմ. բայց այդ որոշումս դեռ չէ իրագործուած։ Չը գիտեմ թէ ում պիտի ընտրեմ։

Խօսակցութեան վերջում Վեհափառը առանձին շնորհակալութիւն յայտնեց եկեղ. կալուածների վերադարձման և աքսորականների արձակման առիթով։

Փոխարքան պատասխանեց, որ այդ բոլորը կայսեր կամքն է եղել, որ ինքը կատարել է։

Դրանից յետոյ Վեհափառը օրհնեց Փոխարքային և իր օրհնութիւնն ուղարկեց կոմսուհուն, առողջութիւն ու բարօրութիւն մաղթելով։

Խօսակցութեան միջոցում Փոխարքան բարեհաճեց թէյ ընդունել։

Տեսակցութիւնը տեւեց 35 րոպէ։

«Արշալոյս»

ՍԼԱՅԻԿ ՆՕԹԵՐ

ԲԱՐԻԶԻ ՀԱՅԵՐԸ

Բ.

Որպէս երկրորդ հակակշիռ բանակ Բարիզի հայ «մտաւորականութեան» դիմաց, ունինք մէկ ուրիշ ջոկատ մը որ կը բաղկանայ ջոջերէ, աղաներէ որոնցմէ ոմանց կրնանք տալ նոյն իսկ չօրպաճիի տիտղոսը, որովհետեւ հակառակ վզի դրած օձիքնուն եւ կռնակնին հագած ֆրօքին, որոնք ամէն հանդիպողին «մեզ ազատեցէք հոսկէ» կը պոռան. այս մարդիկը տակաւին այն են՝ ինչ որ էին ժամանակին ուրիշ տեղ եւ ո՛չ շրջապատը եւ ո՛չ վայրը ամենաթեթեւ ազդեցութիւն մը չէ գործած վրանին։ Կրզբաղին առ հասարակ ադամանդի եւ հնութեան գործերով եւ կրսուի թէ բոլորն ալ նախանձելի դիրքեր ունին Բարիզեան շուկային վրայ։ Գրպաններ եւ տեսարակներ խուզարկելու սովորութիւն չունենալով, չեմ կրնար ճշգրտօրէն ունեցածնուն հաշիւը տալ. սա չափը միայն ըսեմ որ միլիոնճիներ պակաս չեն հոս... բայց այնպիսիներ՝ որ եթէ ունեցածնին տասն է, տետրակին գլուխը հինգ կը դնեն՝ այնպէս հաւատալու եւ անոր համեմատ շարժելու համար։

Անցեալ յօդուածին յիշեցինք «մայրաքաղաքիս» գրագէտներու եւ խմբագիրներու հոծ խուժանը։ Դնելով զէմերնին ֆլոջերու եւ ունեւորներու սոյն փաղանգը, կը բացուի առջեւնիդ «Մեծապատիւ Մուրացկաններու» անմահ պատկերներէն մէկը։

Ասոնք երջանկայիշատակ Աբիսողոմ աղային սնափառութիւնն ալ չունին,—սնափառութենէ զուրկ են չը հասկնաք։ Իրենց ազգային պարտականութիւնը ամփոփած են հետեւեալին մէջ.—հոգաբարձու դառնալ, կիրակի կիրակի ֆայտոնով կամ օթոմոպիլով Ժան-Կուժոնի չէնքը այցելել՝ բարեպաշտ ճանչցուելու մը. տահոգութեամբ, եւ ահա ձեզ բոլորը։

—Ազգային հարց, ազգային պարտականութիւն, ազգային օժանդակութիւն...

—Աղբա՛ր, ո՞ր մէկին, ո՞ր մէկին, ծար չունի, ճօթ չունի այս... Մէկ չէ՛, երկուք չէ՛...

Եւ իրաւ թէ որի՞ն տան։ Մէկ կողմէն՝ «մտաւորական» բանակն է, միւս կողմէն՝ հայ դժբախտներու փաղանգը։

Գրագէտ ու խմբագիր չքաւոր ջոջը՝ ժլատ, կծծի։ Նախորդներուն ամբողջ ճիգն ու ատենարանութիւնը ասոնց առջեւ՝ կայացած գոյութեան ապահովումի խնդրին շուրջը եւ, հետեւաբար, ի՛նչ որ կական է եւ անհրաժեշտ գաղութի մը համար կամ ժողոցուած եւ կամ կամաւորապէս անտեսուած՝ որովհետեւ ատոնք հաճելի բաներ չեն մեծատուններու, նամանաւանդ հայ մեծատուններու, ականջին։

Հարկ կա՛յ ուրեմն բացատրութեան, որ Բարիզի հայերը, ունենալով հանդերձ մէկ կամ մէկուկէս միլիոններոց եկեղեցի մը, չունին ոչ կարգին գրադարան–ընթերցարան մը. ո՛չ օրինաւոր ժողովասրահ մը եւ ո՛չ ալ նպատակայարմար ընկերութիւն մը, որ զբաղէր կարեւոր հարցերով։

Որովհետեւ մէկ կողմ ունինք «մտաւորականներու» հսկայ դասը, որ, ցաւալի է արձանագրել մուրացկանութեան հոմանիշ է դարձած, իսկ միւս կողմ ջոջերը՝ իրենց սիմպոլիք տգիտութիւնով եւ ժլատութիւնով բոլոր էական պէտքերու հանդէպ։ Ո՞վ է այս բոլորին պատճառը։ Ինքը մտաւորական մասը, որ, միշտ սողոսկումի. շոյումի եւ քծնումի քաղաքականութեան հետեւելով, տուած է այս հաստափոր դատարկագլուխներուն ձեռքը զէնք, աստուածացուցած զանոնք իրենց տգիտութեան անկոպար սահմաններուն մէջ՝ անոնցմէ բանի մը համար, եւ այդ մարդիկը ինքզինքին նկատած են կարեւոր ոյժ մը, իշխող դասակարգ մը։

Ահա թէ ինչու Բարիզի հայութիւնը կը ներկայացնէ այսօր լճացած վիճակ մը։ Լճացած կրսեմ այն պատճառով, որովհետեւ շատ բան կը յուսացուէր իրմէ, ունենալով անհամեմատ առաւելութիւններ այլ գաղութներու վրայ ամէն տեսակէտներով։ Թէ որ Բարիզի զարգացած մասը ըլլար արժանապատուութեան նախանձախնդիր ամբողջութիւն մը, այսօր չէինք ունենար Ժան-Կուժոն փողոցին մէջ այն անպէտ ու անօգուտ չէնքը, որուն վրայ առաւել քան միլիոն մը ֆրանք վատնուեցաւ, թողլով մշտականօրէն ծախսուածները ընդհանուր պէտքերու համար։ Թէ որ Բարիզի զարգացած եւ խմբագիր կոչուած մասը, փոխան պնակալիզութեան եւ ոսկոր գտնելու անվայել վարմունքին դիմելու, ունենար կամքի ուժ, սկզբունք եւ պարտականութիւն յարգել տալու կարողութիւն, այսօր, այդ միլիոնին մէկ չնչին մասովը իսկ տեղական հայ գաղութը կունենար հրաշալի ընթերցարան եւ գրադարան մը, ընկերութիւն մը՝ որ նպատակ ունենար տարաշխարհներէ այս անկուշտ մօլոխին ճանկե-

բուն մէջ ինկող տարաբախտներուն օժանդակելու նիւթական եւ բարոյական կրկնակի տեսակէտներով եւ. այսօր չենք վարանիր ըսել. ինքը. նոյն այդ մտաւորական ու զարգացած մասը. իր ուսանողներով ու խմբագիրներով, կուենենար շատ աւելի մարդավայել վիճակ մը եւ պատկառելի դիրք մը՝ քան ինչ որ ունի հիմայ։

Բայց ասոնցմէ եւ ոչ մէկը եղաւ։ կը հարցնենք ձեզի. ասկէ հազարաւոր մղոններ հեռու, ցուրտին ու փուքին անոթի տառապողներէն ո՞րը պիտի զսպէ իր անէծքի, նզովքի եւ քֆրանքի յորդ ժայթքումը բոլոր ասոնց դէմ՝ որ այդպիսի չէնքեր կը կառուցանէն եւ ձեզի դէմ որ, ուրնենալով արգիլելու միջոցներ, աջակիցներ հանդիսացաք՝ քաջալերեցիք զանոնք.. Ի՞նչ պիտի ըսեն եկող սերունդի զաւակները. երբ լսեն թէ մարդիկ,—հայեր,—Բարիզի մէջ քանի մը կանգուն հող գնելու համար կը վճարեն տասնեակ հազարներով ֆրանք. մինչդեռ հայրեր, մայրեր ու մանկիկներ. անդին անօթութենէ կը ցամքին, կը սուղին, կը գօսնան...

Հին վէրքեր քրքրել չենք ուզեր հոս. այսքանը միայն ըսենք որ. ազգային ներկայ ճգնաժամային դրութեան մէջ, ո՛չ միայն մեր բարիզցի «խմբագիրները» չարգիլեցին ու պատնէշը հանդիսացան, այլեւ. տիրացուներուն հետ ձեռք ձեռքի տրուած՝ անժահացուցին կառուցանողին ու սատարողներուն անունները, պատկերներով ու գովաբանականներով...

Կանգ կառնեմ այս տեղ ասոնց վրայ։ Բայց նախ քան վերջ մը դրնելն յօդուածիս. հարկ կը համարիմ քանի մը խօսք ընել նաեւ Բարիզի մէկ այլ դասակարգի՝ աշխատաւորներու մասին որոնք բնականաբար կը կազմեն նաեւ մէկ ստուար քանակ մը։

Մ. Ցոլակ

(Վերջը յաջորդով)

ՆԱՄԱԿԱՏՈՒԹ

Զը՞վճարող բաժանորդներուն. —կը խնդրենք որ մինչեւ փետրվար՝ շտապեն իրենց պարտքերը վճարել։

ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐՁԱԴԱՆԳ

Ցարգելի Վարդօ

Հաճեցէք ձեր ազգօգուտ թերթին մէջ մեզի տեղ մը չնորհել։

Դաշնակցական ընկերներին—Ընկերներ, «Հայրենիք» թերթը սկսաւ նորէն իր սովորական «պլրփ»ները փչել։ Մեզ կը ծանուցանէ թէ՝ ընկերներ իրը թէ ամէն տեղէ պր. Վարդօի մասին գրութիւններ կը խրկեն բայց «Հայրենիք»ը այդ ինկած!!! մարդով չըզբաղիր եղեր!!! զարմանքս կուգայ, Վռամը որ հասարակ առած մը կայ կըսեն «հաւ կիթթին մէջ մազ կը փնտռէ» այդ Վռամը այսօր չի ուզել!!! Վարդօյով զբաղիլ. խեղճ ընկերներ դուք կը հաւատաք այդ ստախօսին, դեռ չի մտմզուեցաք թէ ո եւ է փաստ չունի որ պատասխանէ պր. Վարդօին, ինքը մեզի հազար անգամներ չէ՞ ըսած թէ Վարդօն առաջին կարգի յեղափոխական է, հիմա կրնա՞յ ուրանալ, չեմ զարմանար՝ որ դեռ ոչխարամտօրէն կը հաւատաք այդ մարդուն։ Յօդուածներու շարքը սկսաւ բայց կա՞ր ո եւ է փաստ մը, դուք այդ գրութեան փաստ կըսէ՞ք. արդէն ատոնք եւ ատոնցմէ աւելին պր. Վարդօն իր «Շարժուս» թերթովը գրեց մանրամասն եւ ըսաւ թէ ի՞նչու համար ղբրամը չէ յանձներ։ Երանի թէ մեր տուած դրամները Վարդօներու գանձը մտնէ քան թէ մեզի եւ հայութեան անծանօթ մարդիկներու։ Չեմ գիտեր թէ արդեօք «Հայրենիք» թերթը իրա՞ւ նամակներ կըստանայ որ Վարդօի դէմ կը գրեն. փոխանակ ամերիկայէն Պուլկարիա կրուելու. եկէկ հոս ուղղակի մեզի հետ։ Մենք ձեր աչքին առջեւ ենք եւ ձեզի մօտէն ծածօթ ենք. ըսէք, մեզի համոզեցէք, եթէ կրնաք. 1904ի Ամերիկայի Դաշնակցական պսպաղամաւորական ժողովէն վերջը, դարձեալ արտակարգ ժողով մը գումարեցիք Պօսթօն իբր թէ բողոքող ընկերներուն գոհացում պիտի տրուէր!!; եւ քաջութիւնը չունեցաք մեզի լուր տալու. «ուրիշ քաղաք գտնուելնուս պատճառաւ» այդ ժողովէն առանց ամչնալու ամիսներ վերջ անպաշտօն կամ անհատական նամակներով մեզի կը գրէիք թէ արդեօ՞ք դուք ալ գացած էիք ժողովին։ Ամօթ է ամօթ։ Լինի եւ ուրիշ կոմիտէներու անկեղծ, հոգիով ու մարմնով դաշնակցական բողոքողներուն լուր չի տուիք։

Դուք պարոններ մոլեռանդ ընկերներ պր. Վարդօին հետ չէք կրնար գլուխ ելլել, ձեր ստուածը Վռամը ըսել կուզեմ, Պուլկարիա անոր ոտքերը կը լիզէր որ այսօր ձեր պաշտելին ըրած էք։ Եկէք կարելի է մեզ կը յաղթէք եւ մենք կը լռենք;!!։

Դեռ պր. Վարդօն նոր սկսած էր «Բաց նամակները» ուղղել դաշնակցական ընկերներուն. գիտէ՞ք Վռամը ինչ կըսէր. Վարդօն Ամերիկայի դաշնակցական գործիչի «իրեն համար ըսել կուզէր» գործունէութիւն!!! տեսաւ եւ նախանձէն անանկ կը փչէ». սուտ չէ՞ր ադ։ Նորէն կը տեսնուինք։

Տխուր

Պօսթօն

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՒԷՐ

Խորհուրդս համախորհուրդ պատ. Հողաբարձութեան հետ անհրաժեշտ համարելով դպրոցին եկամուտները ապահովող մի քանի կալուածներ ձեռք բերել, մտադրեց ազգ. պաշտօնական մարմիններէ անկախ նոր ընկերութիւն մը կազմել, որ նպատակ ունենայ այդ գաղափարը իրագործել։

Սոյն խնդրոյ եւ զայն իրականացնելու միջոցներուն վրայ խորհրդակցելու համար կը հրաւիրենք արգոյ հայ հասարակութիւնը յառաջիկայ կիրակի. 15 յունվար, ի ժամ 2, կէսօրէն վերջ, ներկայ գտնուիլ ընդհանուր ժողովին յԱզգ. վարժարան։

Ի դիւաց Թաղական Խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ

Ն. Գ. Բէստանեան Խ. Ազնաւուրեան

(Կնիք)

10 Յունվար 1906

Վառնա

—)o(—

ԱԶԴ

«Հայկական Ընթերցարանի» ամբողջ անդամները կը հրաւիրուին ներկայ ըլլալ. երկուշաբթի Յունվար 16 1906, ժամը 8ին Ազգ. Վարժարանը գումարուելիք ընդհ. ժողովին, ուր ինկատի պիտի առնուին քանի մը կարեւոր խնդիրներ։

Վարչութիւն

(Կնիք

11 Յունվար 1906

Վառնա

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պոլիս 10 Յունվար։— Վաղը Բ. Դուռը, պէլճիգական գործակատարութեան ծանուցագիր մը պիտի տայ, որով Թրքա—պէլճիգական դաշնագրի, պէլճիացիներու կողմանէ եղած մեկնաբանութիւնը պիտի չլէ և ազգու կերպով ժորիսի յանձնումը պիտի մերժէ։

Պելճիգական գործակատարութեան պահանջներուն Ամերիկեանը ոյժ կուտայ։

Պէլճիոյ և Թուրքիոյ յարաբե-

Ամուսնոյն բազկացը մէջ նեստուեցաւ ու գրկեց զայն։

— Տեսա՞ր. իրաւունք չունէի՞ միթէ, ըսէ... բայց ի՞նչպէս եղաւ, պատմէ։

Տեսարանը հարկ եղաւ պատմել։ Արբան շատ պտղ, բայց մարդավայել դիրք բռնած էր։ Պարտէզին մէջ կը պտտէր, տեսակ մը կանանչ գրատ առած վրան, որ ոչ մէկ նոցի ձեւն ունէր եւ ոչ ալ վերարկուի կը նմանէր։ Պարտէզը կատարեալ շաղապատում մը խոտերու, որուն ճամբաներն իսկ անկարելի էր որոշել։ Առաջին խօսակցութեան միջոցին իսկ, միւլ զարմանալի ժպիտ մը ունեցած էր, յետոյ. „Շատ աղէկ. պատասխանած էր կընդունիմ, թող գայ»։ Ու քանի մը հարցումներ ըրած էր իր աչակերտին վերաբերմամբ ի՞նչ տեսակ տղայ էր. ու ի՞նչ ուսած էր...Եղբայրը մինչեւ փողոցին դուռը առաջնորդած ատեն, աւելցուցած էր սա խօսքը. «Քեզի պէտք կը տեսնեմ իմացնելու սակայն. թէ իմ ներկայ յարաբերութիւններէս որոնք կատարեալ կը գտնեմ, էջտ մը անգամ չեմ շեղիր.. ոչ քեզ եւ ոչ ալ կինդ կուզեմ տեսնել»։ Ու բաժնուած էին։

— Հսել է թէ ոչ տունը կրցար տեսնել եւ. ոչ գրադարանը։

— Ոչինչ. նոյն իսկ տունէն ներս մտնել չառաջարկեց։

— Ինք ի՞նչ վիճակի մէջ է։

Հայրս գլուխը ճօճեց տխուր դէմքով մը։

— Խայտառակօրէն կը ծերանայ, խեղճ մարդը.. Սրտի հիւանդութիւն մը ունենալու է։

Գալով ինձի, բաւական յուզուեցայ երբ ձեռք առի սարդենիներով եղերուած նեղ ճամբան, որ գէպի քարուչինեանները կը տանի։ Մտքէս չէր անցներ իսկ դիտելու սարեակները որոնք, մօտս, խիտ գալարիքներու մէջ կը թռչտէին, ոչ ալ թեթեւասայաց կարմրալանջները՝ որոնք գետնին երեսը, ցածլիկ ճիւղերու վրաներէն կը սահէին, ժպտուն ճռուողիւններով։ Ճայ մը, եղեւնի ճիւղ մը յանկարծ մեկնելով, այնպիսի ուժգնութեամբ մը ճչեց. որ սոսկացի, ու գիրքերս գետին ինկան։ Երբ զանոնք հաւաքած կը շտկուէի, ինէ քառասուն քայլ անդին, նշմարեցի հօրեղբայրս որ առջիս կեցած էր ճամբուն վրայ. չիփ չիտակ ու սեփ սեւ։

— Հա՛, եկա՞ր, ըսաւ։

— Այո՛, հօրեղբայր;

Ու կը դողդղայի, ծունգերս իրանիս ներքեւէն խոյս կուտային, թուլցած ու պաղած։

Դէպի վերնագաւիթ սկսաւ երթալ ու սանդուխներէն մէկուն վրայ. հօրթանձիաներու թաւուտքի մը մէջ նստաւ։

— Նստէ, տղաս, ըսաւ ինծի։

— Շատ լաւ. հօրեղբայր։

— Դուն սրինք չալիլ կը սորվիս եղեր։

— Այո, հօրեղբայր։

— Լատիներէն։

— Այո, հօրեղբայր։

— Ի՞նչ են անութիդ տակ ունեցածներդ։

— Գիրքերս։

Ձեռքը առաւ զանոնք, արագօրէն աչքէ անցուց ու մէկդի նետեց տարածութեան մէջ մէկզմէկու ետեւէ։ Անոնց իյնալու ձայնը լսեցի բակը շրջապատող ցած պատին ետեւը։

— Ուրիշ բան գիտե՞ս դեռ, հարցուց ինծի։

— Ոչ՝ հօրեղբայր...

— Աղէկ, տղաս, պարէզ գնա. հոն բրիչ մը պիտի գտնես, բրէ երկիրը. ու երբ յոգնիս, պառկէ խոտերուն վրայ։ Գնա՛։

Ասիկա առաջին դաս եղաւ։

(Շարունակելի)



ՕՔԹԱՎ ՄԻՐՊՕ

ԱՊՊԷ ԺԻԻԼ

Բ. ՄԱՍ

(Հատուածներ)

Այսպէս խոհանոցէն՝ իր տանձնասեղնեակը, անկէ դէպի հիւրասենեակ կերթար ու կուգար, աթոռները չտկելով, գլխանները խառնշտկելով ստուգելու համար թէ արդեօք բան մը մոռցա՞ծ է։ Մայրս զայն դէպի դուռ կը մղէր մէկ կողմէն։

— Բայց չերթա՞ս.... ի՞նչ կը փնտռես... ինչէ՞ն կը վախնաս։

— Եթէ պղտիկը միասին առնե՞մ. կարծեմ աւելի յարմար կրլլայ։

— Խենթութիւն չուզեր... գնա՛ կրսեմ... Ու ջանայ որ մատենադարանին մէջ ընդունի զքեզ։

Հօրս բացակայութիւնը հազիւ ժամ մը տեւեց։ Երբ վերադարձաւ, կատարելապէս զուարթ էր։ Իր քայլերը բակին հողէ յատակին կը բաղխէին հնչականօրէն, կարծես յաղթական քայլեր ըլլային։

— Ի՞նչ եղաւ, հարցուց իսկոյն մայրս յուզուած ու տժգոյն։

— Լմնցաւ... ընդունեց... վաղուընէ սկսեալ, Ալպէրթ կրնայ հոն երթալ...

— Ոչինչ. նոյն իսկ տունէն ներս մտնել չառաջարկեց։

— Ինք ի՞նչ վիճակի մէջ է։

Հայրս գլուխը ճօճեց տխուր դէմքով մը։

— Խայտառակօրէն կը ծերանայ, խեղճ մարդը.. Սրտի հիւանդութիւն մը ունենալու է։

Գալով ինձի, բաւական յուզուեցայ երբ ձեռք առի սարդենիներով եղերուած նեղ ճամբան, որ գէպի քարուչինեանները կը տանի։ Մտքէս չէր անցներ իսկ դիտելու սարեակները որոնք, մօտս, խիտ գալարիքներու մէջ կը թռչտէին, ոչ ալ թեթեւասայաց կարմրալանջները՝ որոնք գետնին երեսը, ցածլիկ ճիւղերու վրաներէն կը սահէին, ժպտուն ճռուողիւններով։ Ճայ մը, եղեւնի ճիւղ մը յանկարծ մեկնելով, այնպիսի ուժգնութեամբ մը ճչեց. որ սոսկացի, ու գիրքերս գետին ինկան։ Երբ զանոնք հաւաքած կը շտկուէի, ինէ քառասուն քայլ անդին, նշմարեցի հօրեղբայրս որ առջիս կեցած էր ճամբուն վրայ. չիփ չիտակ ու սեփ սեւ։

— Հա՛, եկա՞ր, ըսաւ։

— Այո՛, հօրեղբայր;

Ու կը դողդղայի, ծունգերս իրանիս ներքեւէն խոյս կուտային, թուլցած ու պաղած։

Դէպի վերնագաւիթ սկսաւ երթալ

րութիւններուն խզումը կը նախատեսուի (կենթադրուի)։

— Պոլիս 11 յունուար։— Այսօր Ապիսինական պատգամաւորութիւնը կը մեկնի։ Լուր կը շրջի թէ՝ նա Թուրքիոյ հետ, Իտալիոյ դէմ, քաղաքական զինուորական դաշնագրութիւն մը ստորագրած է։

— Պոլիս։— Կը հաւաստեն թէ գերմանական դեսպանութիւնը՝ ներածութեան մաքսային տուրքի բարձրացման համար իր հաւանութիւնը պիտի տայ, եթէ Թուրքիան այս բարձրացումէն գոյանալիք հասոյթէն 250 հազար ոսկի տայ Պաղատ-Պասարա երկաթուղիին քիլոմեդրական ապահովութեան համար։

Նէճիպ Մէլհամէ բաշան մէն միզինավաճառատան առջեւ ոստիկանական գործակատարներ դրած է, որոնց պաշտօնն է ձերբակալել զէնք գնողներ և կը մերժէ յանձնել գընուած զէնքը ու յատկացուած խիստ տուրքը վճարել։ Պաշտօնական այս աւազակութիւնները արդէն բաւական կոկիկ գումարի մը յանգած է։ Ոստիկանութեան համար եկամուտի նոր աղբիւր մ'ալ այս է։

Այս մանրավաճառականութիւնը Կալաթայի պողոտային վրայ սգանոցալ մը հանած է։ Ոստիկանական պաշտօնեայ մը, հած զինավաճառ Նէկէտիշի վաճառատան առջեւ, վաճառատնէն դուրս ելնող Աւստրիացի մը ուզեց ձերբակալել, պարոն Լազար, Աւստրա—Հունգարական դեսպանատան թարգմանիչը, անոր հակառակեցաւ։

Ոստիկանը ձերբակալել ուզեց պարոն Լազարը, ինքզինքը պաշտպանելու համար գրպանէն հանեց վեցհարուածեանը։

Հաւաքուած բազմութիւնը զանի աղատեց։ Աւստրա—Հունգարական դեսպանութիւնը այս դէպքին համար գոհացում կը պահանջէ, որուն ոյժ կուտան և միւս դեսպանութիւնները։ Ոստիկանութեան օտարահպատակներու հանդէպ բռնած ընթացքը անհանդուրժելի է, առանձնաշնորհումները և դաշնագիրները Նէճիպ Մէլհամէի համար մեռած տառեր են։

ՌՈՒՍԻԱ

Բեթերսպուրկ։— Կարմիր շաբաթու տարեդարձը խաղաղ անցաւ։ Գործաւորներէն շատերը չը գացին աշխատելու, սակայն չը համախմբուեցան ու չը կազմեցին ցոյցի թափորներ։ Անոնք գոհացան փոքրիկ խմբակներ կազմելով եկեղեցիները երթալ և քանի մը հոգեհանգիստներու ներկայ գտնուիլ։ Հոգեհանգիստէն ետքը դարձեալ խմբակներու բաժանուած իրենց բնակարանները վերադարձան։ Գործաւորական թաղերու մէջ եղած պահակները հրաման ունէին գործաւորներու դէպի քաղաքին կեդրոնը գնալը արգիլել։

Թատրոններէն շատերը փակ էին։

— Մոսքվա։ — Նահանգներու մէջ թափորներ կազմելու համար եղած փորձերը յաջողութիւն չունեցան։ Օրուան մը համար միայն գործաւորները գործի չը գացին, ուրիշ ոչ մէկ ցոյց չեղաւ։

Քանի մը քաղաքներու մէջ վաճառատները գոցուեցան, սակայն շատ կարճ ժամանակամիջոցի մէջ անոնք բացուեցան, որովհետեւ լուր էր տրուած իրենց եթէ չը բանան մեծ սուգանքի ենթարկուելու են։

— Բարիզ։— Վարշավայէն կիմացնեն Բեթերսպուրկեան կարմիր շաբաթու տարեդարձը տօնելու համար երէկ մանաւանդ գործաւորները աշխատութիւնը դադրեցուցին։ Կառավարիչը քանի մը լրագիրներու ազդարարած է, եթէ անոնք ալ գործադուլ ընեն նոյն իսկ այն օրը պիտի խաբանուին։

„Վիքովսքի" բազարին մէջ զինուորները ցուցարարներու վրայ կրակ բրին։ Երկու մեռած և երեք վիրաւոր կան։

— „Էնազորսգա" փողոցին մէջ կազի սարսափելի պայթում մը եղած է, որ կոմս Զամոյսքիի պալատին մէկ մասը փլցուցած է։ Շատ մարդիկ վիրաւորուած են։

— Լոտցի մէջ վաճառատները և մանիֆագդուրայի տները փակած են։ Կառքերու և թրանվայներու երթեւեկութիւնը դադրած։

Բեթերսպուրկէն կիմացնեն թէ՝ անցեալ գիշեր Գիէվի մէջ շատ մը երկաթուղիի բարձր պաշտօնեաներ և սպաներ ձերբակալուած են։ Բանտերը լեցուն են, և ինչպէս սուգի բոլոր գործարանները փակուած են։

— Վարշավայէն կը հեռագրեն թէ՝ երէկ արշալոյսին այդտեղ բերդին մէջ շատ մը անիշխանականներ գլխատուած են։

— Ռիկայէն կիմացնեն, երէկ 9 յունուար ինչպէս սուգի անցեալ տարուայ 9 Յունվարի ինկածներուն, բոլոր գործաւորները գործաթող բրին։ Կառքերը և թրանվայները չէին երթեւեկէր։ Վաճառատները գոց էին։ Մեծաքանակ զինուորական ոյժ կայ պատրաստուած, անպատեհութիւններու առաջքը առնելու համար։

— „Պերլինէր Լոգալ Անցայկէր" լրագրին Բեթերսպուրկէն կիմացնեն։

Ամսոյս 6 ին Յարսգոէ Սէլօին մէջ, մայրապետներու պէս հագուած երկու հոգի ձերբակալուեցաւ, որոնք խաչահանգիստը տեսնելու պատրուակաւ զինուորական շղթան կտրել կուզէին։ Անոնց մօտ դաշոյններ և տուփ մը անյայտ նիւթ գտնուած է, որուն տեսակը տակաւին հաստատուած չէ։

Կըսեն թէ ցարին դէմ մահափորձ մը ընելու համար է եղեր։

— Բեթերսպուրկէն „Թայմզ"ի կը հեռագրեն. քանի մը օրէն, ցարը ընդհանուր ներումի մանիֆէստ մը կուզէ եղեր տալ։ Միայն ներումի չը պիտի արժանանան այն մարդիկ՝ որոնց քով պայթուցիկ նիւթեր գըտնուած են։

— Հաստատ լուր կը շրջի թէ Նովորոսսիյսք և Պաթում քաղաքները ռմբակոծուած են։

— „Էնդրալ Նիւս"ի Օտէսայէն կիմացնեն թէ՝ յեղափոխականները ոստիկանութեան դիւանատունը ուժանակով մը օդը հանած են։ Զոհերու թիւը որոշուած չէ։

Ոստիկանութիւնը ռումբերու մթերանոց մը գտած և 335 հոգի ձերբակալուած է։

—Քանի մը լրագիրներու համաձայն, արքունական շրջանակներու մէջ համոզում կայ թէ՝ «Ցումման պիտի գումարուի ո՛չ աւելի ուշ քան 1 Մայիս։

—Բեթերսպուրկէն կը գրեն թէ Թիֆլիզի «Վոյնիշգի Բազար» հրատարակի վրայ ռմբաձգութիւններ եղած են։

Պայթումը լսուելուն պէս, զինուորականութիւնը անմիջապէս եկած է։ Հայկական եկեղեցիին պատկանող շէնք մը, որուն մէջ կային վաճառատուն մը, ճաշարան մը, թատրոն մը, տպագրատուն և այլն բռնկած է, անոր դէմ նետուած երկու թնդանօթի ռումբերու պատճառով։ Շատ մարդիկ բոցերու մէջ մեռան։

Թափառաշրջիկները օգտուելով այս խառնակութենէ, փորձած են ուրիշ շէնքեր ալ վառել և աւարի սկսիլ։

—Յեղափոխութիւն, երեւելի իշխանական ընտանիք մը կը ղեկավարուի։

—Պերլին։— «Բուսս» լրագրի հրատարակիչը իշխան Սուվարինը, մամուլի եղեռնական յանցանքի մը համար մէկ տարուան բերդարգելութեան դատապարտուած է։

Մօտ օրէն մամլոյ շատ մը դաներ պիտի տեսնուին։

ԱՆԳԼԻԱ

Լոնտոն.— Մինչեւ հիմայ 577 հոգի ընտրուած են, որոնցմէ 315 պատասխան, 43 գործաւորական կուսակցութենէ, 137 պահպանողական և 82 իրլանդական ազգայնականներ։

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

Գրական. Բանասիրական. Պատմական. Կրթական և Գիտական

63 րդ. ՏԱՐԻ

Հատոր ԿԳ.

Տարեկան Բաժնեգին է 10 Ֆր.

Դիմել՝ Բէտաքսիօն տը լա Բրվիւ Զամ. Վէնիզ Ս. Լազար Վէնիս

ՆՈՐ

"ԳԵՂՈՒՆԻ"Ն

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

—o—

Նախորդներէն աւելի՝ Ճոխ պարունակութեամբ լոյս տեսած է Նոր «Գեղունին» կը պարունակէ 100էն աւելի գեղատիպ դասական պատկերներ, գերազանցօրէն յաջող է տպագրութիւնը, հիանալի են բազմագունի պատկերներն։ Պատկերազարդ թերթէ մը թէեւ չի պահանջուիր գրական գնահատելի պարունակութիւն մը, սակայն խմբագրութիւնը «Գեղունիի» այս բաժինին հարկ եղած ջանքը խնայած չէ. ներքին եւ արտաքին յօդուածագիրներ ունին հետաքրքրական գրուածներ։

Գինն է 10 ֆրանկ. 4 ռուբլի. 2 տոլար։

Դիմել

Իմբոիմէ-ի Արտեմիսն

Ս. Լազար • Վիեննա (Իտալիա)

1887 Ի. ՏԱՐԻ 1906

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵՍՑ

Ուսումնասիրութիւն

Կը մտնէ իւր գոյութեան քսաներորդ տարեշրջանը, և կը շարունակուի իւր ծանօթ ուղղութեամբն և ծրագրով։ «Հանդէս Ամսօրեայ» իբրեւ Հայագիտութեան հանդէս՝ պիտի բովանդակէ Հայ գրականութեան, մատենագրութեան, բանասիրութեան, լեզուաքանութեան, հնախօսութեան, աշխարհագրութեան պատմութեան վերաբերեալ քննադատական ուսումնասիրութիւններ—ինքնագիր և թարգմանածոյ։ Զանց պիտի չառնուին հայ ականաւոր ու գրագէտ անձնաւորութեանց կենսագրութիւնները։ Նոյնպէս քննադատական տեղեկութիւն պիտի տրուի ազգային կարեւոր լրերու, նոր հրատարակութեանց եւն.—Տարեկան բաժնեգինն է 10 ֆր. 4 ռբլ. կանխիկ։ Խմբագրութեան հասցէն «Ա. լա Բէտաքսիօն տը լա Բրվիւ Հանդէս» Վիէննա [Օդրիշ] Է./2 Մխիթարեանց 4

—o—

Печатница на П. Глушковъ С-неВаря